Գերապատիւ Առաջնորդին Հայոց Շամախւոյ՝ Սրբազան Մեսրովբ Արքեպիսկոպոսի՝ ողջոյն և օրհնութիւն։

Առ յայտարարութիւն Գերապատուութեանդ ի 10 ներկայ օգոստոսի ընդ համարաւ 212 տամք գիտել, զի յաւուր գալստեան թագաւոր Կայսերն ամենայն Ռուսաց ի քաղաքն Բագու՝ ժամուք յառաջ ընդ քահանայիցդ Բագուայ և որոց հնարաւոր իցէ ժողովել անդանօր առ Զեզ յեկեղեցին Հայոց, զգեստաւորեսջիք ամենեքին. Դու՝ եպիսկոպոսական լրացեալ զգեստիւք, իսկ քահանայքն՝ միայն շուրջառօք և փորուրարօք. ի ձեռին քում լիցի միայն Ս. Խաչ առանց գաւազանի. մին ի քահանայից ունիցի ի գիրկն զՍ. Աւետարանն և միւսն՝ պատկեր Ս. Աստուածածնի, ունելով ընդ Զեզ բուրվառակիրս, խաչվառակիրս և մոմակալ դըպիրս. ամենեքին մաքուր զգեստուք և շապկօք. և այդպիսի պատրաստութեամբ ելեալ արտաքս յեկեղեցւոյն կացջիք կարգաւ առ այնորիկ դրան՝ ընդ որ անցանելոց իցէ թագաւոր Կայսրն. յաջմէ և յահեկէ քումմէ ունիցիս զքահանայս և զթափորականսն. և այդպէս կացջիք առանց իրիք երգոց և շարականաց. և յանցանել Կայսերն զառաջեաւ թափորին՝ Դու բարձրացուցեալ զԽաչն՝ որ ի ձեռին քում խաչակնքեսցես զՕծեալ Տեառն. և եթէ կամեսցի համբուրել զՍ. Խաչն՝ յառաջ մատուսցես զայն, տալով ի ձեռըս Նորին Մեծութեան ի համբուրել. իսկ եթէ Նորին Կայսերական Մեծութիւն ընդ այլ ճանապարհ անցանիցէ՝ գնալ ի տեղի հանգստեանն, Դուք դարձջիք նովին կարգաւ յեկեղեցի և մերկացեալ զգեստսն՝ գնասջիք յիւրաքանչիւր տեղիս։ Եւ եթէ դէպ լիցի քեզ ներկայանալ Նորին Կայսերական Մեծութեան ի «պրիօմնի» անուանեալ դահլիճն, յայնժամ հարցջիք ցնահանգապետն և ցկառավարիչ հանդիսին թէ ո՞րպէս և զի՞արդ ունիցիս ներկայանալ։

Ողջ լեր ի Տէր։

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հմ. 334
ի 20 օգոստոսի 1888 ամի Փրկչական
Եւ ի թուականութեան մեր ՌՃԼԸ.
ի Սուրբ Էջմիածին։